

Սեծ Պահջբի Լ՛մնսօրեայ Լ՛ղօթքնեը

Սեծ Պահջբի շըջանը ժամանակն է խօկման եւ դարձի. այս առիթ կու տայ մեզի նախընտրեղու մեր կարեւորագոյն գործերը եւ կրկին անգամ կողմնորոշեղու մեր կեանքը առ Լ՛ստուած, որմէ շարունակ կը հեռանանք: Լ՛յս տարի, Սեծ Պահջբը ունի յատուկ իմաստ. Վանդի Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատացեալները դժուարին փորձառութիւններէ անցան կրելով մեծ ցաւ, չարչարանք, անարդարութիւն եւ կորուստ: Ո՛ւր է մեր յոյսը. ի՞նչ կրնանք ընել. վստահաբար կրնանք ընել այն ինչ որ մեր Վրիստոնեայ նախահայրերը միշտ ըրած են փորձութեան եւ յուսահատութեան ժամանակ: Սենք վստահօրէն կրնանք դառնալ առ Լ՛ստուած իբրեւ մեր առաջին յոյսը:

Հետեւեալը գաղութային առիթ մըն է Լ՛րեւելեան Թեմի հաւատացեալներուն, որ միասին աղօթեն, միաւորեղու մեր մտահոգութիւնները, կառուցանեղու համար մեր Տիրոջ մարմինը: Լ՛յս աղօթքները քաղուած են Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններէն, եւ աղօթքներուն մեծամասնութիւնը առնուած են ժամագիրքէն: Լ՛յս Սեծ Պահջբի շըջանին, կը քաջալերենք մեր բոլոր հաւատացեալներուն որ օրը առնուազն տասը վայրկեան բարձրաձայն կարդան այս աղօթքները սկիզբէն մինչեւ վերջ. նախընտրելի է որ ընդերցողները տրամադրեն յատուկ ժամանակ եւ վայր աղօթեղու ըլլայ առանձին, ընտանեկան, եւ կամ՝ նոյնիսկ բարեկամներով: Կարելի է նաեւ ստեղծել հոգեւոր միջնորդութ մը ունենալով աղօթասեղան մը զետեղեղու վրան խաչ, խաչքար, սրբապատկեր, մում, խունկ եւ այլն:

Լ՛յս աղօթեղու գաղափարը սկզբնակէտն է ամենօրեայ աղօթքի որ պէտք է դառնայ սովորութիւն, ուր մեր փառաբանութիւնը, ապաշխարութիւնը, եւ վերակողմնորոշումը առ Լ՛ստուած կը դառնայ բնական եւ սովորական մեր կեանքէն ներս:

Թող Տէրը լսէ մեր աղօթքները եւ ողորմէ մեզ:

† Օրհնեալ Տէր մեր Յիսուս Վրիստոս.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Օ հաց մեր հանապազորդ սուր մեղ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: † Օ ի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն.

Հաւատամք † յՄանասուրբ Երրորդութիւնն, ի հայր, եւ յՈրդի, եւ ի Սուրբ Հոգի: Օ ւաւետումն Գաբրիէլի, զՇնունդն Վրիստոսի • զՍկրտութիւնն, զՋարչարանս, զԱստուծութիւնն, զԹաղումն երեքօրեայ, զՀարութիւնն, զաստուածապէս համբարձումն, զՆստիլին ընդ աջմէ հօր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ՝ Գալուստն՝ խոստովանիմք եւ հաւատամք:

† Սուրբ Մատուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: (Կրկնել երեք անգամ)

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ՝ մայր քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քոյ եւ աստուծոյ մերոյ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղէն եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Եւ զթիւք նոցա եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Եւ մենակա՛լ Տէր Մատուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Հարաւթ օրր:

Պսակիչ սրբոց Վրիստոս, որ պսակես զսուրբս քո եւ առնես զկամս երկիւղածաց քոց եւ նայիս սիրով եւ քաղցրութեամբ յարարածս քո, լո՛ւր մեզ յերկնից ի սրբութենէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ Մատուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց եւ Ս. (անուններ) որոց այսօր է յիշատակ: Եւ լո՛ւր մեզ Տէր, եւ ողորմեա՛:

Սաղմոս Ծ

Ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում՝ բաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Եւ յաւել լուսա՛ զիս յանօրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս:

Օ անօրէնութիւնս իմ՝ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ՝ առաջի իմ՝ են յամենայն ժամ:

Վեղ միայն մեղայ, Տէր, եւ չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս քո եւ յաղթող ի դատելքեղ:

Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Ղու, Տէր, զճճմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

Յօղեա՛ յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց, լուս՛, եւ քան զձինս սպիտակ եղէց:

Լսելի արա՛ ինձ, Տէր, զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Ղարձո՛ վերեսս քո ի մեղաց իմոց. եւ զամենայն անօրէնութիւնս իմ՝ քաւեա՛ յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց, եւ զհոգի քո Սուրբ մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ. եւ հոգւով պետութեան քոյ հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. եւ ամբարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուած, Աստուած փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ՝ յարդարութեան քում:

Տէ՛ր, եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա՛, Տէր, կամօք քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Արուսաղեմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

† փառք հօր եւ Որդոյ եւ հոգւոյն Սրբոյ

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք անոնց որոնք ցաւի մէջ են եւ կարիքի պէտք ունին

Փարատէ ցաւերը եւ բժշկէ հիւանդութիւնները քու ժողովուրդիդ, Տէր Աստուած մեր, եւ կատարեալ առողջութիւն շնորհէ քու (ծրատայիդ/աղախնոյդ -----ին) ու բոլորին, քու ամենայաղթ † խաչիդ նշանով, որուն վրայ դուն բարձրացուցեր մարդկային ցեղի տկարութիւնները եւ դատապարտեցիր մեր կեանքի եւ փրկութեան թշնամին: Գուն ես մեր կեանքն ու փրկութիւնը, ով բարերար եւ բազումողորմ՝ Աստուած, եւ դուն միայն կրնաս ներել մեր մեղքերը ու մեր մէջէն վերացնել խտերն ու հիւանդութիւնները: Վեղի յայտնի են մեր պէտքերն ու կարիքները, ով բարիքներ պարգեւող քու առատ ողորմութեանդ պարգեւէ բոլոր արարածներուդ, իւրաքանչիւրին իր կարիքին համաձայն. եւ քու պարգեւներուդ մէջ թող միշտ գովաբանուի † ամենասուրբ Երրորդութիւնդ, հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. ամէն:

**Աբ. Գրիգոր՝ Կարեկացի
Բան Խ**

Սրտի խորերէն Աստուծոյ խօսք

Տէ՛ս զիս պաշարող վտանգներուն յաճախանքը,
ու՛ր Գուն, որ ամէնուն հանդէպ քաղցր ես միշտ:
Յաղթական կենազէն խաչիդ սուրովը քանդէ՛ վարմին ցանցերը,
որոնք ամէն կողմէ մահով կը շրջապատեն գերիս,
եւ անդորրը հանէ՛ մոլորածիս սասանած ոտքերը:
Բժշկէ՛ մղձկուած սրտիս ջերմի հրատապ տոչորումը.
† Խափանէ՛ Վեղի հանդէպ յանցաւորիս
դիւային չարահասարութեան փսփսուքը.
Հալածէ՛ չարի հետ կենակցողիս հոգիին
յուսահատ անձկութեան մթութիւնը:
Յրուէ՛ ծխամած թանձրութիւնը,
որ իմ՛ներսս մտած ու վրաս բռնացող մեղքերուն երեւոյթն է.
Կորսնցո՛ւր զազիր եւ թխատիպ կիրքերուն ապականաբար սաստկութիւնը:
Նորոգէ՛ հոգիիս մեջ՝ հզօրիդ անունին
մեծ փառքին պաշտուած լուսապատկերը.
Օ՛րացո՛ւր շնորհիդ փայլումը՝ գեղեցկացնելու համար
ինձի պէս հողեղէնին հոգեւոր դէմքն ու կերպարանքը.
Ինչ որ Վու պատկերդ է իմ՝ մէջս,
պատշաճօրէն յարդարե՛ զարդարե՛, Վու աստուածային կենդանի՝
անեղծ եւ երկնաւոր լոյսիդ նշուլազարդ մաքրութեամբը սրբելով՝ մեղաւորիս մարմնոյն՝
շունչին եւ հոգւոյն աղտերը:
Սլանդի Գուն միայն օրհնուած ես
† Հօրը հետ, Սուրբ Հոգիիդ գովեստին համար,

*յաւիտեանս յաւիտենից
Ամէն:*

Մանասէ Թագաւորի Աղօթքը

Ով ամենակալ Տէր, Աստուածը Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ անոնց արդար սերունդներուն.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Ղուն ստեղծեցիր երկինքն ու երկիրը եւ անոնց բոլոր զարդերը.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Ղուն կապանեցիր ծովը քու հրամանիդ խօսքովը, խորութիւնները փակեցիր եւ կնքեցիր քու ահաւոր եւ փառաւորեալ սուրբ անունովդ.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Վրու զօրութեանդ վախէն կը սարսին եւ կը դողան ամէն բան.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Վրու սրբութեանդ փառքերուն մեծվայելչութիւնը անսահման է, սաստիկ են, քու բարկութեանդ սպառնալիքները մեղաւորներուն դէմ, սակայն անչափ եւ անքննելի են քու ողորմութեանդ խոստումները.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Բարձրեալ ես դուն, ով Տէր, գթած, համբերող, եւ բազում ողորմ, եւ կը ցաւիս երբ մարդիկ չարիք ընեն.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Ով Աստուած, դուն ապաշխարութիւն չսահմանեցիր արդարներուն՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի համար, որոնք քեզի դէմ չմեղանչեցին.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Սակայն ապաշխարութիւն սահմանեցիր ինծի՝ մեղաւորիս համար, որովհետեւ իմ մեղքերս աւելի են քան ծովու աւազը, եւ բազմացան իմ անօրէնութիւններս.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Արժանի չեմ աչքերս վերցնելու եւ տեսնելու երկնքի բարձրութիւնը՝ իմ մեղքերուս պատճառաւ.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Կորացած եմ ես երկաթեայ կապանքներուս ծանրութենէն, եւ հանգիստ չկայ ինծի համար.

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Վրու սրտմտութիւնդ գրգռեցի, եւ ըրի ինչ որ չար է քու աչքիդ, կուռքեր կանգնեցի եւ քու ցասումդ բազմացուցի:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Եւ հիմա, ով Տէր, իմ սրտիս ծունկը կը չոքեմ, եւ քու քաղցրութեանդ կը դիմեմ:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Մեղանչեցի, ով Տէր, մեղանչեցի, եւ ես գիտեմ՝ իմ անօրէնութիւններս:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Կ'աղաչեմ եւ կը խնդրեմ քեզմէ, ներէ ինծի, ով Տէր, ներէ ինծի, եւ մի դատապարտեր զիս իմ անօրէնութիւններուս պատճառով:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Մի յաւիտենապէս բարկանար ինծի, ով Տէր, եւ մի յիշեր իմ չարիքներս, ու մի դատապարտեր զիս երկրի խորքը իջնողներուն հետ:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Գուն, ով Տէր, Մատուածն ես ապաշխարողներուն, եւ ինծի ցոյց պիտի տաս քու բարութիւնդ՝ որուն անարժան եմ:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Մզատե՛ զիս քու մեծ ողորմութեամբդ, եւ ես պիտի օրհնեմ քեզ իմ կեանքիս բոլոր օրերուն:

† ամենակալ Տէր, ներէ իմ մեղքերս:

Վեղ, ով Տէր, կ'օրհնեն երկնքի բոլոր հրեշտակները, եւ քեզի կը վայելէ փառք, յաւիտենապէս. ամէն:

† Փառք տանք Հօր, եւ Արդիին, եւ Սուրբ Հոգիին:

Հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. ամէն:

Մեծ Պահջի Մղօթք

Սուրբ սրտիւ եւ հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս առաջի Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Վրիստոսի՝ յիշելով զմեծամեծս նորա զանչափ շնորհս, զհամբերութիւն կենսատու՝ իսաչին եւ զհեղումն ազատեցուցիչ արեան նորա, եւ զտոցին նմանս, որ յայսմ ժամու վասն մեր մեղաւորացս կրեաց նա: Եւ մեք, զայս ամենայն զմտաւ ածելով սրբեսցուք ի մեղաց զխորհուրդս, զբանս եւ զգործս մեր, կատարեսցուք զսրբութիւն անձանց մերոց ահիւն Մատուծոյ: Մի՛ յապաղիցուք խոստովան լինիլ նմա զմեղս մեր եւ խնդրել զթողութիւն մեղաց մերոց, զի մի՛ կորիցիմք անապաշխար զյաւիտենական կորուստն: Եւ մի՛նչրեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս ի կեանս յայստօսիկ՝ օրինակ վարուց մերոց ունելով զամենայն սուրբս եւ զյաղթողնահատակն, որք միանգամ ի սկզբանէ հաճոյ

եղեն Տեառն եւ Փրկչին բոլորեցունց: Արոց աղօթիւք եւ բարեխօսութեամբն շնորհեսցէ մեզ մարդասերն Աստուած զհաճոյսն իւր եւ զօգուտն մեր խորհիլ միշտ եւ առնել եւ անպատում պարգեւացն հաղորդա գտանիլ: Օ, որ խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Վրիստոս, Տէ՛ր մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Վեղ տեսառնդ յանձն եղէց:
Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛.

Սուրբ Ներսէս Շնորհալիի 24 Աղօթքներէն

Ամենախնամ՝ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ւ զչարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. [†] եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Փառաւորեա՛ւ Տէր, ընկա՛ւ զաղաչանս ծառայիս քո եւ կատարեա՛ ի բարի զինդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին եւ Յովհաննու մկրտչին, եւ սրբոյն Ղրիգորի մերոյ Առաքելին, եւ սրբոց առաքելոց, մարգարեից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց: Աւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի [†] Սուրբ Արքորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, օգնեա՛ մեզ, Աստուած Փրկի՛ չմեր, վասն մեծի փառաց անուանդ քո: Տէ՛ր, փրկեա՛ զմեզ եւ քաւեա՛ զմեզս մեր վասն անուան քոյ սրբոյ: Պարսպեալ պահեա՛ զ՛առ ի քեզ զապաւինեալ եւ զյուսացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական [†] խաչիւղ քով ի խաղաղութեան: Փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ [†] հօր եւ ընդ Արբոյ հոգւոյդ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Փառք քեզ, աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի, տէր, փառք քեզ:

Աղօթքները եւ սաղմոսները քաղուած են Հայաստանեայց Ափեղեցոյ ժամագիրքէն, բացի հանգանակէն, որ առնուած է Հայաստանեայց Ափեղեցոյ Սուրբ Սկրտութեան արարողութիւնէն: Նարեկացոյ աղօթքի արդի հայերէն թարգմանութիւնը՝ Թորգոմ Վրբ. Վուշակեան (Արուստղէմ, 1931) «Աղօթք Սանասէ Թագաւորի» եւ «Աղօթք անոնց որոնք ցաւի մէջ են եւ կարիքի պէտք ունին» թարգմանութիւն՝ Արշէն Վհնյ. Այլազեանի (2021). եւ այլ թարգմանութիւն աշխարհաբառի Արփի Նազգաշեան: Այս աղօթքները հաւաքուած են Սարկաւազ Արիք Աղլի կողմէ: Առաջնորդութիւն Հայոց եկեղեցոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի, 2021.